Արձանագրություն N 3

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի կարիքների համար դեղորայքի և բժշկական պարագաների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/1 » ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի գնահատման նիստի

ք. Երևան 01 սեպտեմբերի 2025թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Գ. Գալստյան

Ն. Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Գրիգորյան

Օրակարգ

1. Հայտերի գնահատման մասին
2. Հանձնաժողովի որոշումների մասին

1. Հայտերի գնահատման մասին

1.1 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի գնահատման նիստին հանձնաժողովն արձանագրեց, որ հայտերը կազմված են հրավերին համապատասխան բացառությամբ «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արփիմեդ» ՍՊԸ-ի, «ԱրՋիԸնդէյՋեյ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի, «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ի հայտերում բացակայում են «Սահմանված կարգով դեղերի իրացման լիցենզիա»-ն: «ԱրՋիԸնդէյՋեյ Գրուպ» ՍՊԸ –ի Հավելված 1.1 –ում պետք է նշել ֆիրմային անվանում և արտադրողի անվանումը: «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի Հավելված 1.1–ում անհրաժեշտ է շտկել 99-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրերը՝ համապատասխանեցնելով հրավերի պահանջներին, 105-րդ չափաբաժնի անվանումը և տեխնիկական բնութագիրը, 125-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագիրը լրացնել: «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի Հավելված 1.1–ում անհրաժեշտ է շտկել տեխնիկական բնութագիրը 135-րդ չափաբաժնի համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Հանձնաժողովի որոշումների մասին

Որոշվեց՝
2.1 Հաշվի առնելով «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ի, «Արփիմեդ» ՍՊԸ-ի, «ԱրՋիԸնդէյՋեյ Գրուպ» ՍՊԸ-ի, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ի, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի, «Արֆարմացիա» ՓԲԸ-ի,

«Ռիտա Գասպարյան» ԱՁ-ի հայտերում արձանագրված անհամապատասխանությունը՝ ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի» կազմակերպման մասին կարգի 41-րդ կետով, հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցել մասնակիցներին՝ առաջարկելով մինչև կասեցման ավարտը շտկել անհամապատասխանությունը:

2.2 «ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ - 26/1» ծածկագրով ընթացակարգի վարման նիստը կշարունակվի 2025 թվականի սեպտեմբերի 03 - ին, ժամը 10:00 - ին:

2.3 Հանձնաժողովն արձանագրեց, որ սահմանված ժամկետում շտկում ներկայացրել են «Ռիխտեր-Լամբրոն» ՀՁ ՍՊԸ-ն, «Արփիմեդ» ՍՊԸ-ն, «ԱրՋիԸնդէյՋեյ Գրուպ» ՍՊԸ-ն, «Տոնուս-Լես» ՍՊԸ-ն, «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ն, «Արֆարմացիա» ՓԲԸ-ն, «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ն :

2.4 Հաշվի առնելով «ՍԴԴ Գրուպ» ՍՊԸ-ի և «Ռիտա Գասպարյան» ԱՁ-ի 76-րդ չափաբաժնի, Արփիմեդ» ՍՊԸ-ի և «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ի 110-րդ չափաբաժնի համար ներկայացրած հավասար գնային առաջարկները՝ հանձնաժողովը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի 526-Ն որոշման 40-րդ կետի համաձայն, որոշեց հավասար գներ ներկայացրած մասնակիցների հետ վարել միաժամանակյա բանակցություններ:

Հավասար գներ ներկայացրած մասնակիցներին էլեկտրոնային ձևով ծանուցել գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման պայմանների, տևողության, օրվա, ժամի և վայրի մասին:

«ՔԲԿ-ԳՀԱՊՁԲ-26/1» ծածկագրով ընթացակարգի գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները տեղի կունենան 08 սեպտեմբերի 2025 թվականին, Կոմիտաս 54 Բ հասցեում, ժամը 10:00-ից 10:30:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝ ______________ Լ. Հովհաննիսյան

Հանձնաժողովի անդամներ՝ ______________ Գ. Գալստյան

______________ Ն. Լալայան

Քարտուղար՝ ______________ Մ. Գրիգորյան